ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1964 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Ն.Վ. ԳՆՆԵԳԴԱՑՈՒԹՅՈՒՆ

Հ. Ն. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ. ՄԵԾ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՐԴԻԿ, ՀԱՅՊԵՏՀՐԱՏ, 1963, 481 ԷՋ

Հայպետհրատը լույս է ընծայել Հ. Ն. Կարապետյանի «Մեծ պայքարի մարդիկ» խորագրով դիրքը, որտեղ հեղինակը կարողացել է հեղափոխական շարժումների ու սոցիալիզմի կառուցման ընդհանուր ֆոնի վրա ճշմարտացիորեն ու գիտական բարեխղճությամբ ընթերցողին ներկայացնել լենինյան հին գվարդիայի ներկայացուցիչներ Սարգիս Կասյանի, Սահակ Տեր-Գաբրիելյանի և Գևորգ Աթաբեկյանի կյանքն ու հեղափոխական գործունեությունը։

Հեղինակը նյութը ընթերցողին է մատուցում կենդանի ու պատկերավոր լեզվով։ Նա պատմական նյութի գիտական շարադրման համար տարիներ շարունակ համառորեն պրպտումներ է կատարել ոչ միայն Հայաստանի, այլև Թբիլիսիի, Բաքվի, Մոսկվայի, Լենինգրադի և այլ քաղաքների արխիվներում, գրադարաններում, թանգարաններում, օգտվել նրանց հարազատների, պայքարի ու աշխատանքային շատ ընկերների հիշողություններից։

Աշխատության առաջին հատվածը նվիրված է բոլշևիկյան կուսակցության ականավոր գործիչ, Հայաստանի Հեղկոմի առաջին նախագահ Սարգիս Կասյանի կյանքին (1876—1937)։

1919 թ. վերջերին, հայ ժողովրդի համար բախտորոշ ու օրհասական օրերին, երբ անդրկովկասյան մթնոլորտը թունավորված էր ազգայնական շնչով, իսկ Հայաստանը կործանման եզրին հասցրած դաշնակցական ապիկար կառավարությունը քաղաքական տհասությամբ շարունակում էր հայ ժողովրդի փրկությունը տեսնել արևմտյան իմպերիալիստական տերությունների ողորմածության մեջ, Կասյանն իր նշանավոր «Ո՞ւր է ելքը» գրքում գրել է. «Ո՛չ. Հայաստանի ժողովրդի փրկության ուղին այնտեղ չէ, ուր որոնում են պատեպատ ընկած դաշնակցականները և մյուս ազգայնական հեղհեղուկ մտավորականները։ ...Երկաթի և արյան միջոցով պահվող, ժողովրդական տառապանքի և հառաչանքի վրա կառուցված այդ աշխարհը չէ, որ պիտի փրկի հայ ժողովրդին տանջանքից և հառաչանքից, այլ այն աշխարհը, որի արշալույսը բացվել է ռուսական հյուսիսում...

Միակ ելքը այդ է, ուրիշ ելք չկա»։

Այս էր Սարգիս Կասյանի հավատո հանգանակը մեր ժողովրդի համար բախտորոշ օրերին։

Դեռևս պատանեկան հասակում, Բաքվի ռեալական ուսումնարանում սովորելու տարիներին, Կասյանը հաղորդակից է լինում նարոդնիկական գաղափարներին, կարդում արգելված գրականություն։ Դեպի հայկական-քաղաքական հարցերը ցուցաբերած բուռն հետաքրքրությունը 1900 թ. նրան տանում է արտասահման։ Լայպցիգի առևտրական ինստիտուտն ավարտելուց հետո Կասյանը տեղափոխվում է Բեռլին և սովորում տեղի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետում։

Գերմանիայում եղած տարիներին Կասյանը սկսում է ծանոթանալ Մարքսի ուսմունքին, կարդում է Վ. Ի. Լենինի աշխատությունները և կապվում տեղի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ։

Սակայն Կասյանը անմիջապես չկանգնեց բոլշևիզմի դիրքերում։ 1903 թ. նա Բեռլինից սկսեց աշխատակցել հնչակյան մանրբուրժուական կուսակցության «Հնչակ» ու «Վերածնություն» թերթերին։

Չգունազարդելով Կասյանի այդ շրջանի քաղաքական գործունեությունը, հեղինակը կարողացել է համոզիչ կերպով ցույց տալ, որ նրա հոդվածները իրենց բնույթով ու բովանդակությամբ ակնհայտորեն տարբերվում էին հնչակյան պարբերականների քաղաքական ուղղությունից և արտահայտում հնչակյան կուսակցության ձախ թևի առաջադիմական տենդենցները։ Արդեն այդ հոդվածներում ինքնակալության նկատմամբ օպոզիցիոն տրամադրված բոլոր կուսակցությունների մեջ Կասյանը առաջնությունը տալիս էր Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը, որն ընթանում էր համաժողովրդական «կովի ավանգարդում»։

Ավարտելով համալսարանը, 1904 թ. աշնանը, Կասյանը Բեռլինից վերադառնում է Բաքու, ընկնում նոր միջավայր։ 1905 թ. Կասյանը վերջնականապես խզում է իր կապերը հնչակյանության հետ, մտնում ՌՍԴԲՊ շարքերը, և, ինչպես հեղինակն է նշում, դրանով ավարտվում է Կասյանի «գաղափարական-քաղաքական որոնումների շրջանը»։

ՌՍԴԲՊ շարքերն ընդունվելուց անմիջապես հետո Կասյանը հսկայական աշխատանք է ծավալում բոլշևիկյան լիցքալ ու անլեզալ մամուլի ստեղծման ուղղությամբ։ Հաջողությամբ կատարելով ՌՍԴԲՊ Բաքվի կոմիտեի հանձնարարությունը, Կասյանը կազմակերպում է «Բանվորի ձայնը» հայերեն թերթի հրատարակումը, որի առաջին և միակ համարը լույս է տեսնում 1906 թ. մարտին։ Թերթը ցարական ոստիկանության կողմից փակվելուց հետո, Կասյանը մեկնում է Թբիլիսի և մասնակցում Ստեփան Շահումյանի կազմակերպած «Կայծ» թերթի խմբագրման աշխատանքներին։ Այնուհետև, 1906—1907 թթ. Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի հետ համատեղ նա խմբագրում է «Նոր խոսք» և «Օրեր» բոլշևիկյան թերթերը։

Այս շրջանում էր, որ դրսևորվում է Կասյան-բոլշևիկի հրապարակախոսական փայլուն տաղանդը։ Բազմաթիվ տեսական հոդվածներում նա կարողանում է մարքսիստական իր հարուստ գիտելիքները շաղկապել Անդրկովկասի բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի կոնկրետ խնդիրների հետ։ Կասյանն առանձնապես անողոք պայքար է ծավալում բուրժուական ազգայնականության դեմ, որն իր տարածման համար պարարտ հող էր գտել Անդրկովկասում՝ ցարիզմի կողմից ազգամիջյան թշնամանքի հրահրման պատճառով։ Կասյանը գտնում էր, որ ազգայնականությունն այն վտանգն է, որը սպառնում է Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատի միասնական պայքարին՝ ընդդեմ ցարական ինքնակալության։

1910 թ. Կասյանը Բաքվից տեղափոխվում է Թբիլիսի։ 1914 թ. ապրիլին նա ձերբակալվում է, դատի տրվում և վարչական կարգով արտաքսվում Աստրախան, ուր մեկ տարի մնալուց հետո փոխադրվում է Վոլոգդա, որտեղ մնում է մինչև ինքնակալության տապալումը։

Ս. Կասյանի գործունեության այս ժամանակաշրջանի վերաբերյալ համեմատաբար քիչ տեղեկություններ են մնացել։ Սակայն հեղինակը կարողացել է, երբեմն առաջին հայացքից երկրորդական թվացող փաստաթղթերի միջոցով վերականգնել նրա կյանքի մի շարք անհայտ էջեր։

1917 թ. ամռանը Կասյանը վերադառնում է Թբիլիսի և ամբողջովին իրեն նվիրում կուսակցական աշխատանքի։ Շուտով նա դառնում է կուսակցության Կովկասյան երկրային կոմիտեի աջի ընկնող ղեկավարներից մեկը։

1917—1920 թթ. ժամանակաշրջանում կուսակցական-կազմակերպչական հսկայական աշխատանքից բացի, Կասյանը ծավալում է տեսական բեղմնավոր գործունեություն։ Երբի հեղինակը կարողացել է մտորեն վերլուծել Կասյանի այդ շրջանի գրական ժառանգությունը և տալ նրա օբյեկտիվ գնահատականը։ Կասյանի գրչի տակից մեկը մյուսի հետևից դուրս են գալիս բազմաթիվ հոդվածներ, որոնցում նա մարքս-լենինյան դիրքերից պատասխան է տալիս հասարակական-քաղաքական կյանքի բազմաթիվ հրատապ հարցերի, լայնորեն պրոպագանդում անդրկովկասյան բոլշևիկների քաղաքական գիծը, մերկացնում երկրամասի բուրժուա-ազգայնական կառավարությունների հակաժողովրդական էությունը։

1919 թ. ամռանը, խուսափելով ձերբակալությունից, Կասյանը հեռանում է մենշևիկյան Վրաստանի սահմաններից և կուսակցության Կովկասյան երկրային կոմիտեի հանձնարարությամբ գալիս Հայաստան։

1919 թ. սեպտեմբերին Երևանում հրավիրվում է Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների ներկայացուցիչների պատմական խորհրդակցությունը, որտեղ Կասյանը զեկուցում է ընթացիկ մոմենտի և կոմունիստական կազմակերպությունների խնդիրների մասին։ Խորհրդակցությունում ընտրվում է ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտե (Արմենկոմ), որի կազմում Կասյանը ղեկավար դեմք էր։ Խորհրդակցությունը նաև որոշում է ընդունում՝ հանձնարարել Կասյանին՝ իր զեկուցման թեզիսների հիման վրա գրել մի գիրք, որտեղ պետք է շարադրվեր Հայաստանի կոմունիստների խնդիրները տվյալ իրադրության պայմաններում և աշխատավորական լայն մասսաներին ցույց տրվեր ստեղծված ծանր վիճակից դուրս գալու ելքը։ Կատարելով Արմենկոմի պահանջը, Կասյանը դեկտեմբերին լույս է ընծայում իր «Ո՞ւր է ելքը» նշանավոր աշխատությունը։

Հ. Կարապետյանը մանրամասն վեր է լուծում Կասյանի վերոհիշյալ աշխատությունը, համոզիչ կերպով ցույց տալիս նրա հասարակական ու քաղաքական մեծ նշանակությունը հայ ժողովրդի համար բախտորոշ այդ օրերին, նշում գրքի գնահատման հարցում առանձին հեղինակների կողմնակալ վերաբերմունքն ու ոչ միշտ եղրակացությունները։ Հեղինակը հիմնավոր կերպով ցույց է տալիս, որ այդ աշխատության շուրջը անցյալում եղած քննադատությունը եղել է

միանդամայն անարդարացի ու ոչ գիտական։ Գնահատելով Ս. Կասյանի գիրքը հեղինակը իրավամբ նկատում է. «Որքան մենք հեռանում ենք մոայլ 1919 թ.,—գրում է Հ. Կարապետյանը,— և որքան բազմապատկվում են մեր սոցիալիստական կյանքի ու միջազգային կոմունիստական շարժման հաջողությունները, այնքան ավելի ակնհայտ է դառնում նրանում արծարծված մտքերի խոր իմաստն ու ճշմարտությունը» (էջ 135)։

1920 թ. սկզբին Ս. Կասյանը ձերբակալվում է դաշնակների կառավարության կողմից և տրտաքսվում Հայաստանից։ Սա անցնում է Վրաստան, ապա՝ սովետական Բաքու, որտեղ գտնվում էր Հայաստանի կոմունիստական կուսակցության նորաստեղծ Կենտրոնական կոմիտեն։ Այստեղ, 1920 թ. նոյեմբերին, Կասյանը հաստատվում է ՀԿԿ Կենտկոմի կազմում, իսկ որոշ ժամանակ անց, ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի և ՀԿԿ Կենտկոմի կողմից նշանակվում է Հայաստանի նորաստեղծ Հեղկոմի առաջին նախագահ։

Այնուհետև գրքի հեղինակը մանրամասն ու փաստական հարուստ նյութերի հիման վրա լուսաբանում է այն մեծ աշխատանքը, որ կատարել է Կասյանը Հայաստանում և Անդրկովկասում՝ սովետական իշխանության տարիներին։ Զբաղված լինելով պրակտիկ պատասխանատու աշխատանքներով, Կասյանը չէր դադարեցնում իր հրապարակախոսական-ժուռնալիստական գործունեությունը, մնում էր որպես կուսակցության գաղափարական ճակատի ակտիվ գինվոր, մարքսիստական գաղափարների անխոնջ պրոպագանդիստ։

Հեղինակը, իհարկե, Կասյանի այդ շրջանի գրական-գաղափարական աշխատանքներում տեսնում է նաև թերություններ։ Անդրադառնալով Ս. Կասյանի «Սպեցիֆիկները և սպեցիֆիզմը» գրքին, նա գրում է. «Եթե Կասյանը առհասարակ անսխալական չէր, այս գրքի կապակցությամբ դա ճիշտ էր առավել ևս» (էջ 201)։

Մերկացնելով բուրժուական ազգայնականների հակաժողովրդական գործելակերպը և մասնավորապես, հայ «սպեցիֆիկների» հակարանվորական, ազգայնական էությունն, իր գրքում. սակայն, Կասյանը թույլ է տվել անհամոզիչ ձևակերպումներ, երբեմն անարդարացի քննադատության ենթարկելով պայքարի ու աշխատանքի իր ընկերներին։ Հեղինակը դա համարում է կուսակցության գաղափարական կյանքում այն ժամանակ գոյություն ունեցող դժվարությունների և տարաձայնությունների արդյունքը, որոնցից հեռու չէր կանգնած նաև Ս. Կասյանը։

Կարևորն այն է, որ Հ. Կարապետյանը փորձում է «Սպեցիֆիկները և սպեցիֆիզմը» գիրքը վերլուծել իր ամբողջության մեջ առավելություններով ու թերություններով հանդերձ։ Հեղինակի այդ փորձը խրախուսելի է, եթե նույնիսկ տեղ-տեղ նրա եզրակացությունները համոզիչ չլինեին կամ համարվեն վիճելի։

Ընթանալով շրջանցման ու անտեսման «մեթոդի» դեմ, Հ. Կարապետյանը փորձ է արել գիտական հողի վրա վերլուծել նաև Ս. Կասյանի երկար ժամանակ լռության մատնված, «Հայաստանի տնտեսական դասակարգային ստրուկտուրան» ծավալուն հոդվածը։ Հայտնի է, որ անհատի պաշտամունքի տարիներին լույս տեսած շատ աշխատություններում պատեհ և անպատեհ առիթներով վարկաբեկվում էին լենինյան հին գվարդիայի բազմաթիվ գործիչներ, եթե նրանք իրենց գործունեության ընթացքում թույլ էին տվել որոշ սխալներ, մի բան, որ մեզ վնաս է հասցրել պատմական գիտությանը։ Այս տեսակետից էլ ուշադրավ է, որ Հ. Կարապետյանն անցյալի գործիչների հասարակական ու գրական ժառանգության գնահատմանը մոտենում է անկողմնակալ կերպով, հանդես բերում համբերատարություն, արհեստականորեն չմեծացնելով նրանց կողմից թույլ տված սխալները։

Գրքում հանդամանորեն ցույց է տրված, որ Սարգիս Կասյանը լինելով լենինյան տիպի բաղաբական գործիչ, մեծ ցավով էր վերապրում անհատի պաշտամունքի ժամանակաշրջանի անօրինականությունները, չէր կարողանում համակերպվել ներկուսակցական կյանքում ստեղծված ծանր մթնոլորտին և ամենայն անկեղծությամբ ու համարձակությամբ, բոլշևիկյան սկզբունքայնության դիրքերից, թեկուզ իր կյանքը վտանգի ենթարկելու գնով, քննադատում էր Բերիայի ու նրա կողմնակիցների գործունեության արատավոր ու արտառոց մեթոդները Անդրկովկասի կուսակցական կազմակերպության մեջ։

Դեռևս 1930 թ. նոյեմբերին, հանդես գալով ՀԿԿ Կենտկոմի, ԿՎՀ-ի, Երևանի կուսակցական ակտիվի միացյալ նիստում և սուր քննադատության ենթարկելով ՀԿԿ Կենտկոմի ղեկավարության ոճը, Ս. Կասյանը նիստի մասնակիցների ուշադրությունն է հրավիրում այն բանի վրա, որ պարտիական կյանքում «կոլեկտիվ ղեկավարությանը աստիճանաբար փոխարինում է միանձնյա ղեկավարությունը», որ «...կուսակցության մեջ գոյություն ունի անտանելի ռեժիմ, բացակայում է ինքնարննադատությունը...»։

Հասկանալի է, որ բերիական բանդան չէր կարող ներել նրան։ Ուստի Կասյանին ներկայացրեցին անհիմն մեղադրանքներ և 1937-թ. ձերբակալեցին։ Նա զոհ գնաց կոմունիզմի թշնամիների ստոր զրպարտանքներին։

«Մեծ պայքարի մարդիկ» մենագրության հաջորդ բաժինը նվիրված է ականավոր բոլշևիկ Սահակ Տեր-Գաբրիելյանին (1886—1937)։

«Սովետական դարաշրջանի... նոր մարդու տիպարը, որին ես տեսա Սովետական Հայաստանում, ընկեր Տեր-Գաբրիելյանն է։ Այդպիսի նոր մարդուն մենք չենք կարող չսիրել»։ Այս խոսքերը պատկանում են ֆրանսիացի նշանավոր գրող Ժան-Ռիշար Բլոկին և արտասանվել են սովետահայ գրողների հետ նրա ունեցած հանդիպման ժամանակ, 1934 թ. սեպտեմբերին։

Ինչպես Սարգիս Կասյանի, այնպես էլ Սահակ Տեր-Գաբրիելյանի մասին մեր հասարակայնությունը քիչ բան գիտե։ Եվ պատահական չէ, որ ընթերցողները մեծ հետաքրքրությամբ են թերթում գրքի այն էջերը, որտեղ հեղինակը քայլ առ քայլ ու ջերմ զգացմունքներով մեր առջև բացահայտում է անզուգական բոլշևիկի ամբողջական կերպարը։

Սահակ Տեր-Գաբրիելյանը իր բախտը կոմունիստական կուսակցության հետ կապեց 1902 թ. Բաքվում։ Հեղափոխական անձնուրաց աշխատանք նավթաշինարհի բանվորական շրջաններում, ձերբակալություն, նորից անգիջում պայքար անարդար հասարակարգի դեմ։ Ինչպես ռուսական առաջին հեղափոխության տարիներին, այնպես էլ նրան հաջորդած ռեակցիայի ժամանակաշրջանում Տեր-Գաբրիելյանը պայքարի առաջին գծում մնաց աննահանջ։

1917 թ. ապրիլի 3-ին շատերի հետ միասին ֆինլանդական կայարանում Ս. Տեր-Գաբրիելյանը դիմավորում է հեղափոխության առաջնորդ Լենինին, լսում նրա պատմական ճառերը։ Պետրոգրադից նա Բաքու է վերադառնում՝ իր հետ բերելով Վ. Ի. Լենինի Ապրիլյան թեզիսները։ Հեղինակը ցույց է տալիս, թե Պետրոգրադից վերադառնալուց հետո Տեր-Գաբրիելյանը ինչպիսի եռանդով է իրեն նվիրաբերել Վ. Ի. Լենինի Ապրիլյան թեզիսների պրոպագանդման գործին։ Նա շարունակ ելույթներ էր ունենում բանվորական ժողովներում, պարզաբանում բոլշևիկների խնդիրները հեղափոխության տվյալ էտապում։ «Բուրժուազիան իր ցանկությամբ չի հեռանում իշխանությունից,—ասում էր Տեր-Գաբրիելյանը,—դեմոկրատիայի ուժն է նրան դուրս մղում։ Բայց չի կարելի կեսճանապարհին կանգ առնել. իշխանությունը պետք է ամբողջովին անցնի բանվորների, գյուղացիների և զինվորների դեպուտատների սովետների ձեռքը...» (էջ 243)։

Բաքվի կոմունայի ժամանակաշրջանում Սահակ Տեր-Գաբրիելյանը վարում էր նավթային կոմիսարի, այնուհետև հակահեղափոխության դեմ պայքարող արտակարգ հանձնաժողովի նախագահի պաշտոնները։ Գրքում ցույց է տրված, թե ինչպիսի հսկայական ջանքեր էր թափում նա, կազմակերպելու նավթի առաքումը Սովետական Ռուսաստան։ 1918 թ. Բաքվի սովետական իշխանության գործուզմամբ Տեր-Գաբրիելյանը կրկին լինում է Մոսկվայում, մի շարք հանդիպումներ ու զրույցներ ունենում Վ. Ի. Լենինի և կուսակցության ու կառավարության մյուս ղեկավար գործիչների հետ, լսում նրանց ցուցումները, կատարում նրանոր հանձնարարությունները։

Բաքվի հերոսական կոմունայի անկումից հետո, 1918 թ. վերջին Ս. Տեր-Գաբրիելյանը աշխատանքի է անցնում Մոսկվայում և վարում մի շարք պատասխանատու պաշտոններ։

Հայաստանում սովետական իշխանության հաղթանակից հետո, որպես Հեղկոմի անդամ, Ս. Տեր-Գաբրիելյանը նշանակվում է Սովետական Հայաստանի լիազոր-ներկայացուցիչ Ռուսաստանում, իսկ 1923 թ. դառնում Անդրկովկասյան ֆեդերացիայի ներկայացուցիչ Ռուսաստանում։

1928—1935 թթ. Ս. Տեր-Գաբրիելյանը Հայաստանի Ժողկոմսովետի նախագահն էր։ Գրքում բերված են բազմաթիվ հետաքրքիր փաստեր, թե ինչպիսի անհուն նվիրվածությամբ էր նա իր անսպառ եռանդը ծառայեցնում հանրապետության ինդուստրացման ու գյուղատնտեսության կոլեկտիվացման, սովետահայ գիտության ու կուլտուրայի զարգացման գործին։

Ս. Տեր-Գաբրիելյանը միշտ հիշեցնում էր, որ Հայաստանը բոլոր հնարավորություններն ունի ամենակարճ ժամանակամիջոցում արդյունաբերական զարգացած հանրապետություն դառնալու։ «Հայաստանում ուր էլ աչք գցես մեկ է՝ լեռներ են,—ասում էր Ս. Տեր-Գաբրիելյանը։—Պետք է միայն այդ լեռները գիտել ոչ թե տուրիստի ու գեղանկարչի, այլ երկրաբան-տիրոջ նման»։ Նա մեծ ջանքեր գործադրեց Հայաստանի ժողովրդական տնտեսության առաջին հնգամյա պլանի գիտական մշակման ուղղությամբ։ Նա գտնում էր, որ հնգամյա պլանը պետք է ելնի հանրապետության հանքային հարստություններից, ջրային ռեսուրսների օգտագործման և գյուղատնտեսության բոլոր բնագավառների առավելագույն զարգացման անհրաժեշտությունից։

Հեղինակը սրտի ցավով է նշում, որ 1937 թ. Ս. Տեր-Գաբրիելյանը, ի թիվս կուսակցության

ու պետության այլ ականավոր գործիչների, ձերբակալվեց Բերիայի թշնամական բանդայի կողմից և «պահվեց պարտիայի ու ժողովրդի հանդեպ մաքուր խղճով»։

Գրքի վերջին բաժինը նվիրված է ռեալյուցիայի անվեհեր մարտիկ Գեորգ Աթաբեկյանին (1892—1925)։

Ինչպես հայտնի է, Գեորգ Աթաբեկյանի մասին մինչ այսօր գրվել են մի շարք հոդվածներ ու առանձին հուշեր։ Նրա կերպարը արծարծվել է նաև գեղարվեստական գրականության մեջ։ Եվ, բնականաբար, ընթերցողները համեմատաբար շատ բան գիտեն նրա կյանքի վերաբերյալ։ Սակայն, չնայած դրան, Գ. Աթաբեկյանի կյանքի նկարագրությունը Հ. Կարապետյանի գրքում նույնպես կարդացվում է մեծ հետաքրքրությամբ։ Հեղինակը կենդանի ու պատկերավոր լեզվով կարողացել է բացահայտել նրա գործունեության բազմաթիվ նոր էջեր, որոնք մինչև այժմ կամ անհայտ էին, կամ ստվերի տակ մնացած։

Գեորգ Աթաբեկյանը պատկանում էր ոչ մեծաթիվ պրոֆեսիոնալ այն հեղափոխականների թվին, որոնց նկատմամբ բոլշևիկների կուսակցությունը, անսահման վստահություն տածելով, կենաց և մահու կռվի ուղարկեց պրոլետարիատի իշխանության ամենամոլի թշնամիների դեմ։ Աթաբեկյանը փայլուն կերպով արդարացրեց կուսակցության վստահությունը։ Անձնվեր լենինյանի անհողդողդ կամքը և ճնշվածների գործի հաղթանակի նկատմամբ ունեցած անսահման հավատը հաջողությամբ զուգակցելով հեղափոխական արվեստին, նա քաղաքացիական պատերազմի ամբողջ ժամանակաշրջանում, զենքը ձեռքին սարսափ տարածեց թշնամիների շարքերում։

Փետրվարյան հեղափոխությունից հետո Գ. Աթաբեկյանը Ալեքսանդրապոլում ակտիվ հեղափոխական աշխատանք է ծավալում քաղաքի բանվորների ու կայազորի զինվորների շրջանում։ 1917 թ. օգոստոսին նա ընտրվում է բոլշևիկների կողմից քաղաքում ստեղծված արտակարգ հանձնաժողովի կազմում, որի նպատակն էր խափանել Պետրոգրադում նախապատրաստվող գեներալական դավադրության արձագանքները Ալեքսանդրապոլում տեղաբաշխված զորամասերում։

Վատթար առողջության կապակցությամբ, բժիշկների խորհրդով, 1917 թ. հոկտեմբերին Աթաբեկյանը տեղափոխվում է ծովափ՝ Սուխումի։ Այստեղ նա անմիջապես կապվում է տեղի բոլշևիկների հետ և մասնակցում Արխազիայում սովետական կարգերի հաստատման համար պայքարին։

1918 թ. գարնանը Արխազիայում հաստատվեց սովետական իշխանություն։ Իրեն հատուկ եռանդով, Գ. Աթաբեկյանը ձեռնամուխ է լինում զինված կարմիր ջոկատների կազմակերպմանը, կարմիր Արխազիան պաշտպանելով թշնամիների հարձակումներից։

1918—1919 թթ. Աթաբեկյանին մենք տեսնում ենք նախ Հյուսիսային Կովկասի արտակարգ հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնում, ապա Աստրախանի հեղոսական պաշտպանների շարքերում։ 1920 թ. սկզբին, Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողովի որոշմամբ նա նշանակվում է արտակարգ հանձնաժողովի լիազոր-ներկայացուցիչ Կուբան—Սեծովյան մարզում։ Այստեղ նա հնարամիտ ու խիզախ գործողություններով խափանում է սպիտակ խռովարարների բազմաթիվ դավադրությունները, ճնշում հակասովետական ելույթները։ Նա առանձնապես մեծ եռանդ ու ջանք է ներդնում վրանգելյան լրտեսական կազմակերպությունների լիկվիդացման գործում։

1921 թ. հունվարին Գ. Աթաբեկյանը ժամանեց Երևան, որպես Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողովի լիազոր-ներկայացուցիչ՝ նորաստեղծ Սովետական Հայաստանում։ Այդ այն ժամանակն էր, երբ դարանակալ թշնամին՝ դաշնակցությունը, տենդորեն խռովություն էր նախապատրաստում՝ վերահաստատելու տապալված իշխանությունը։ Արտակարգ Հանձնաժողովի և հանրապետության կարմիր բանակի հատուկ բաժնի աշխատանքները վերակազմակերպելով, Աթաբեկյանը բացահայտում է թշնամու մի շարք լուրջ դավադրությունները, մերկացնում բազմաթիվ թաքնված խռովարարների։ Ավելի ուշ, կարմիր ջոկատների գլուխն անցած, նա ակտիվորեն մասնակցում է դաշնակների փետրվարյան ավանտյուրայի լիկվիդացմանը։

Հետաքրքրությամբ են ընթերցվում գրքի այն էջերը, որոնք վերաբերում են Հայաստանի կոմկուսի Կենտկոմում և Հայաստանի Հեղկոմում 1921 թ. սկզբին ծագած տարաձայնություններին։

Անցյալներում այդ տարաձայնությունների հարցը բավական լուրջ վեճերի տեղիք է տվել, թե՛ պատմական գրականության մեջ և թե՛ գիտական խորհրդակցություններում։ Հեղինակը դիմելով մի շարք փաստաթղթերի, այդ հարցը վերլուծում է իր ամբողջության մեջ։ Նա որոշ պատմական էքսկուրսիաներ է կատարում՝ վերհիշում Փարիզյան կոմունայի պատմությունը, Աստրախանի 1919 թ. դեպքերը և այլն։ Եվ ոչ մեկին չի մեղադրում օպորտունիզմի մեջ, չի օգ-

տագործում անվանարկող պիտակներ։ Ավելին, նա գտնում է, որ տարաձայնող երկու կողմերի գլխավոր ներկայացուցիչներ Ս. Կասյանը և Գ. Աթաբեկյանը, ինչպես նաև նրանց հետևողները, բոլշևիկյան կուսակցության անձնվեր զինվորներ էին, մարքսիստ-լենինյաններ։ «Հարցը տակտիկայի մեջ էր,—գրում է Հ. Կարապետյանը,—որ ճանապարհով բնթանալ, որ Հայաստանի տառապյալ աշխատավորը ավելի արագ և ավելի լավ կառուցի իր երջանիկ կյանքը։ Երկուսին էլ հավասարապես հուզում էր նույն հարցը, երկուսն էլ հավասարապես պատրաստ էին իրենց հանգիստն ու կյանքը լիովին նվեր բերելու բանվորի ու աշխատավոր գյուղացու երջանկությանը» (էջ 426)։

Տարաձայնությունների բովանդակությունը վերլուծելուց հետո, վերջ ի վերջո, հեղինակը հարցը լուծում է Ս. Կասյանի օգտին, որն ավելի մեղմ քաղաքականության կողմնակից էր, քաղաքականություն, որ, ինչպես իրավացիորեն նշվում է գրքում, անհամեմատ ավելի ճիշտ էր և անխոցելի «Կոմպարտիայի ներքին ու արտաքին քաղաքականության տեսակետից» (էջ 429)։

1921 թ. կեսերին Գ. Աթաբեկյանը աշխատանքի տեղափոխվեց Վրաստան։ Անդրֆեդերացիայի ստեղծումից հետո նա մի շարք պատասխանատու պաշտոններ է վարում երկրամասում և իր ամբողջ ուժերը նվիրում հրիտասարդ սովետական ռեսպուբլիկայի տնտեսության զարգացմանը։

Հակահեղափոխական տարրերը, բուրժուազիան և քաղքենի ինտելիգենցիան Աթաբեկյանի մեջ միայն տեսնում էին «սատան» ու «դաժան» մարդուն։ Սակայն իրականում այդպես չէր։ «...Այդ «դաժան» մարդու մեջ,—գրել է բանաստեղծ Հակոբ Հակոբյանը,—ապրում էր ազնիվներից ազնիվ, քնքուշ մի հոգի, երեխայի սրտի պես բյուրեղյա մի սիրտ, իմաստունի մտքի պես պարզ ու հստակ մի խելք, լուրջ, պատասխանատու վերաբերմունք մեր ամեն մի բայլի համար, հանդիստ ու արդար՝ իր հեղափոխական խղճի համար»։ «Նրան համարում էին հակահեղափոխության սարսափը,—ասել է Սարգիս Լուկաշինը,—բայց նա, ով նրան մոտիկից է ճանաչում, կասի, որ Աթաբեկյանը շատ քնքուշ և հիանալի ընկեր էր» (էջ 451—452)։

Չափազանց վաղ կտրվեց Գ. Աթաբեկյանի կյանքի թելը։ 1925 թ. մարտի 22-ին Աթաբեկյանը Ալեքսանդր Մյասնիկյանի ու Սոլոմոն Մոգիլևսկու հետ միասին օդային ազետի զոհ դարձավ, երբ ընդամենը 33 տարեկան էր։

«Մեծ պայքարի մարդիկ» գիրքը, իհարկե, զերծ չէ նաև առանձին թերություններից։

Ինչպես նշեցինք, աշխատությունը, ընդհանուր առմամբ, գրված է կենդանի ու պատկերավոր լեզվով։ Սակայն գրքի բազմաթիվ հաջող հատվածների կողքին կան առանձին էջեր, որոնք թերի են գրական մշակման տեսակետից կամ շարադրված են անհաջող ձևակերպումներով։

Չնայած հեղինակը մեծ աշխատանք է կատարել իր հերոսների կյանքի ամենամութ էջերը լուսաբանելու ուղղությամբ, այնուամենայնիվ, առանձին էջերում փաստերի պակաս է նկատվում, որի հետևանքով որոշ տեղեր շարադրանքը կրում է սխեմատիկ բնույթ։ Այսպես, ցանկալի է, որ հեղինակը ավելի խոր լուսաբաներ Ս. Կասյանի գործունեությունը ստոլիպինյան ռեակցիայի տարիներին, կամ Ս. Տեր-Գաբրիելյանի կյանքը՝ 1905—1907 թթ. ընկած ժամանակաշրջանում։

Մի շարք դեպքերում հեղինակը հանդգնորեն շարադրել է այնպիսի հարցեր, որոնք վաղուց ի վեր իրենց լուծումն են ստացել պատմական գրականության մեջ և դրանց կրկին անդրադառնալու հարկ չկար։

Գրքում տեղ են գտել նաև առանձին ոճական ու շարահյուսական թերություններ (էջ 112, 236, 238 և այլն), ինչպես նաև չնկատված վրիպակներ (էջ 376 և այլն)։

Սակայն, հեղինակը մեծ աշխատանք է կատարել գիտական հասարակայնությանն ու ընթերցողների լայն շրջաններին հանձնելով շափազանց ուշագրավ մի գործ։

Գրքի առաջաբանում հեղինակը գրում է, որ ինքը շարունակելու է իր աշխատանքները «Մեծ պայքարի մարդիկ» աշխատության երկրորդ գրքի ստեղծման ուղղությամբ, որը նվիրված է լինելու Ալեքսանդր Բեկզադյանի, Վլադիսլավ Կասպարովի, Հովսեփ Լազյանի, Մարտիրոս Միրաքյանի (Շանթ) և Սարգիս Լուկաշինի կյանքի ու գործունեության պատմությանը։ Դա ստեղծագործական աշխատանքի միանգամայն ողջունելի պլան է։ Ցանկալի է երկրորդ գիրքն ավելի կատարյալ տեսնել։

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ